

բ. իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Միջոցառումների պահանջներին:

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված Միջոցառումների արդյունքը Նախարարության կողմից ընդունվելու դեպքում պահանջել վճարելու իրեն հասանելիք գումարը:

2.2.2. Նախարարության կողմից գումարները չվճարելու դեպքում միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Նախարարությունը պարտավոր է՝

2.3.1. սույն պայմանագրով և այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը:

2.3.2. կատարել առանձին Միջոցառումների իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մամիների հետ:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. սույն պայմանագրով Նախարարության կողմից տրամադրված գումարների հաշվառումն իրականացնել՝ հաշվապահական հաշվառման մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան:

2.4.2. Միջոցառումների իրականացման նպատակով ֆինանսական միջոցներն օգտագործել սույն պայմանագրի N 2 հավելվածով նախատեսված ֆինանսական ցուցանիշներին համապատասխան:

2.4.3. կատարել Նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները:

2.4.4. Նախարարությանը ներկայացնել կազմակերպությունում հաշվետու ժամանակաշրջանում փաստացի խնամվողների թվաքանակի շարժի վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն սույն պայմանագրի N 3 հավելվածի:

2.4.5. Նախարարությանը ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում կատարված ծախսերի վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի N 5 հրամանով սահմանված տնտեսագիտական դասակարգման անալիտիկ հաշվառմամբ հաշվետվությունը՝ համաձայն սույն պայմանագրի N 4 հավելվածի:

2.4.6. Նախարարությանը ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի փետրվարի 4-ի N 104 հրամանով սահմանված կարգով և ժամկետներում Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ հաշվետվությունները:

2.4.7. Սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 10 օրյա ժամկետում Գլխավոր ֆինանսիստի հաստատմանը ներկայացնել ֆինանսատնտեսական գործունեության ամփոփ նախահաշիվը՝ համաձայն N 7 հավելվածի: Ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով պայմանավորված՝ համապատասխան հիմնավորումների հետ միասին, Նախահաշվի յուրաքանչյուր փոփոխություն ներկայացնել Գլխավոր ֆինանսիստի համաձայնեցմանը, այնուհետև՝ հաստատմանը:

2.4.8. 2021 թվականի ֆինանսատնտեսական գործունեության նախահաշվով նախատեսված միջոցների շրջանակներում անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերով:

2.4.9. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Միջոցառման իրականացմանը վերաբերվող փաստաթղթերին ծանոթանալու Նախարարության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում:

2.4.10. Նախարարության կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունելու դեպքում, Նախարարության կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները:

3. Մոնիթորինգը

3.1. Նախարարությանը միջոցառման իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Նախարարության կամ նրա կողմից լիազորված կազմակերպության կամ անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և առաջարկություններ:

3.4. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է Միջոցառման շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Միջոցառմանն առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Կազմակերպությունը հաշվետու ամսվա ավարտից հետո նախարարության պատասխանատու ստորաբաժանում է ներկայացնում Միջոցառումների իրականացման վերաբերյալ Եզրակացություն՝ համաձայն N 6 հավելվածի:

4.2. 4.1 կետով սահմանված Եզրակացության դրական գնահատման դեպքում Կազմակերպությունը՝ մինչև հաշվետու ամսվա հաջորդող ամսվա 17-ը, Նախարարություն է ներկայացնում հանձնման-ընդունման ակտի երեքական օրինակ՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 5 հավելվածի:

4.3. Կազմակերպությունը՝ հանձնման-ընդունման ակտի հետ միաժամանակ Նախարարություն է ներկայացնում խնամվողների թվաքանակի շարժի և կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվությունները՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասեր կազմող N 3 և 4 հավելվածների:

4.4. Նախարարությունը՝ հանձնման-ընդունման ակտը ստանալու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում իր կողմից ստորագրված և կնքված հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը ներկայացնում է Կազմակերպությանը, իսկ չստորագրման դեպքում՝ դրա պատճառաբանված մերժումը:

4.5. Կազմակերպության կողմից իրականացված Միջոցառումների արդյունքը Նախարարության պատասխանատու ստորաբաժանումների կողմից գնահատվում է ՀՀ ԱՍՀՆ 22.06.2016թ. N 69-Ա/1 հրամանի 2.10 կետի, նույն հրամանի N 3 հավելվածով հաստատված եռամսյակային հաշվետվության հիման վրա: Միջոցառումների իրականացման 75% և ավել արդյունքի դեպքում պատասխանատու ստորաբաժանումը տալիս է դրական եզրակացություն՝ համաձայն N 6 հավելվածի: 75% -ից ցածր արդյունքի դեպքում, սույն պայմանագիրը ենթակա է վերանայման:

4.6. ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N2215-Ն որոշման 4-րդ կետի 13-րդ ենթակետով պայմանավորված՝ կազմակերպության կողմից պայմանագրով նախատեսված տարեկան աշխատանքների արդյունքում առաջացած տնտեսումները (խնայողությունները) վերադարձվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2021 թվականի դեկտեմբերի 24-ը, իսկ որոշ ծախսային հոդվածների գծով դեկտեմբեր ամսվա արդյունքներով պայմանավորված խնայողությունների ետ վերադարձը իրականացնել մինչև հաջորդ տարվա հունվարի 20-ը:

5. Պայմանագրի գինը

5.1. Սույն պայմանագրի տարեկան գինը՝ 90,945,400 (իննսուն միլիոն ինը հարյուր քառասունհինգ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ: Պայմանագրի գինն իր մեջ ներառում է Կազմակերպության կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ ներառյալ նաև բոլոր հարկերը, տուրքերն ու պարտադիր այլ վճարները:

5.1.1. Պայմանագրի տարեկան գինը կողմերի համաձայնությամբ կվերանայվի լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի համար:

5.2. Կազմակերպության հետ պայմանագիր կնքելուց հետո կազմակերպությանը տրամադրվում է կանխավճար՝ պայմանագրի գնի 1/12-րդ չափով, դեկտեմբեր ամսին մարելու պայմանով:

5.3. Պայմանագրի գինը իր մեջ ներառում է փոփոխուն և հաստատուն ծախսեր.

5.3.1. փոփոխուն ծախսերի գծով դրամաշնորհի առավելագույն չափը կազմում է 17,374,000 (տասնյոթ միլիոն երեք հարյուր յոթանասունչորս հազար) ՀՀ դրամ:

_Մենդանթերքի ծախս՝ 14,558,000 (տասնչորս միլիոն հինգ հարյուր հիսունութ հազար) ՀՀ դրամ: Ընդ որում, մեկ խնամվողի հաշվարկով մեկ օրվա առավելագույն գինը կազմում է 820 ՀՀ դրամ:

_Երեխայի և նրա ընտանիքի հետազոտման և ախտորոշման համար աշխատողների ուղեվարձ՝ 216,000 (երկու հարյուր տասնվեց հազար) ՀՀ դրամ: Ընդ որում, մեկ այցի գինը կազմում է 600 ՀՀ դրամ:

_Երեխաների ուղեվարձ 2,500,000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ: Ընդ որում, մեկ խնամվողի հաշվարկով մեկ օրվա գինը կազմում է 200 ՀՀ դրամ:

_ Արտակենտրոնում մատուցվող ծառայությունների դիմաց աշխատողների ուղեվարձ՝ 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ: Ընդ որում, մեկ այցի գինը կազմում է 200 ՀՀ դրամ:

5.3.2. հաստատուն ծախսերի գծով դրամաշնորհի առավելագույն չափը կազմում է 73,571,400 (յոթանասուներեք միլիոն հինգ հարյուր յոթանասունմեկ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ:

5.4. Սույն պայմանագրի գինը կարող է փոփոխվել երկկողմ համաձայնությամբ՝ սույն պայմանագրի 8.3 կետի համաձայն նոր համաձայնագիր կնքելու դեպքում:

5.5. Նախարարությունը՝ Կազմակերպության կողմից իրականացված Միջոցառումների դիմաց փոխհատուցում է անկանխիկ՝ իր գանձապետական հաշվից գումարը Կազմակերպության գանձապետական հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է սույն պայմանագրին կից N 5 հավելվածով սահմանված «Հանձնման-ընդունման» երկկողմանի ստորագրված ակտի հիման վրա, սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված ֆինանսական միջոցների սահմաններում, բայց ոչ ավելի քան տվյալ ժամանակահատվածի (տարեսկզբից աճողական) համար նախատեսված գումարի չափից: Հաշվետու ժամանակահատվածում փաստացի իրականացված Միջոցառումների դիմաց վճարվելիք գումարի չափը սույն պայմանագրի N 2 հավելվածով նախատեսված գումարի չափը գերազանցելու դեպքում, վճարումն իրականացվում այն եռամսյակում, որում դրամական միջոցները նախատեսված են:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է Նախարարությանը փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Նախարարությունը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության

հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է 2021թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար:

8.2. Սույն պայմանագրից ծագած՝ կողմերի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցմամբ, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց կողմերի գրավոր համաձայնության:

8.3. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր (համաձայնագրեր) կնքելու միջոցով, որը (որոնք) կհանդիսանա (կհանդիսանան) սույն պայմանագրի անբաժանելի մասը (մասերը):

8.4. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.5. Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, 2, 3, 4, 5, 6, 7 հավելվածները բաղկացած են 18 էջից և համարվում են սույն պայմանագրի անբաժանելի մասերը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները եվ ստորագրությունները

Նախարարություն՝	Կազմակերպություն՝
<p data-bbox="284 1189 783 1256">«Հայաստանի և սոցիալական հարցերի նախարարություն»</p> <p data-bbox="328 1290 738 1323">ք. Երևան, Կառավարական տուն-3</p> <p data-bbox="328 1357 743 1391">«Հ ՖՆ գործառնական վարչություն»</p> <p data-bbox="424 1424 643 1458">Հ/Հ 900011011187</p> <p data-bbox="432 1458 635 1491">ՀՎՀՀ 01506515</p> <p data-bbox="292 1525 770 1559">Նախարարության գլխավոր քարտուղար՝</p> <p data-bbox="647 1626 810 1659">Ս. Մուրադյան</p> <p data-bbox="376 1693 507 1715">(ստորագրություն)</p> <p data-bbox="212 1727 268 1760">Կ. Տ.</p>	<p data-bbox="938 1189 1437 1256">«Հայաստանի և սոցիալական հարցերի նախարարության «Լոռու մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ»</p> <p data-bbox="983 1323 1437 1357">«Հ Լոռու մարզ, ք.Վանաձոր, Տարուն-4»</p> <p data-bbox="1142 1357 1289 1391">ՄՄՇ թիվ 23</p> <p data-bbox="1094 1391 1329 1424">բանկի անվանումը</p> <p data-bbox="999 1424 1422 1458">«Հ ՖՆ գործառնական վարչություն»</p> <p data-bbox="999 1458 1329 1491">Հ/Հ 900238000583</p> <p data-bbox="1110 1491 1313 1525">ՀՎՀՀ 06910273</p> <p data-bbox="874 1525 1278 1559">Կազմակերպության տնօրենի ԺՊ՝</p> <p data-bbox="1302 1592 1501 1626">Լ. Աբրահամյան</p> <p data-bbox="1038 1659 1169 1682">(ստորագրություն)</p> <p data-bbox="927 1693 983 1727">Կ. Տ.</p>

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ

Ծրագիրն իրականացվում է «Լոռու մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից, որի նպատակն է խնամք ստացողների և իր սպասարկման տարածքում բնակվող երեխաների սոցիալ-հոգեբանական օգնության, իրավական խորհրդատվության, ուսումնադաստիարակչական ծառայությունների, մասնագիտական կողմնորոշման, արվեստի միջոցով թերապիայի, օկուպացիոն թերապիայի (վերականգնողական վարժանքներով թերապիա), ժամանցի տրամադրումը, ինչպես նաև սոցիալական ներառմանն ուղղված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ միջոցառումների կազմակերպումը, ինչպես նաև ընտանեկան բռնության ենթարկված անձանց և նրանց ընտանիքի անդամներին աջակցությունը:

Ծրագրի շրջանակներում նախատեսված 100 երեխայի խնամք 42 հաստիքային միավորի միջոցով:

NN ը/կ	Իրականացվելիք միջոցառման					
	Անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնաժամկետը	Պահանջվող գումարը
1.	Երեխաների և ընտանիքների աջակցության տրամադրման ծառայություններ ծրագիր	«Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության առարկան կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու կանխարգելման և (կամ) կյանքի դժվարին իրավիճակից դուրս բերելու նպատակով սոցիալ-հոգեբանական, սոցիալ-մանկավարժական և սոցիալ-իրավական բնույթի սոցիալական ծառայությունների կազմակերպումը և (կամ) տրամադրումն է, կազմակերպությունում խնամք ստացողներին օրական մեկ անգամ սննդի, իրավական խորհրդատվության,	1. Համաձայն «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի և «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի Երեխաների սոցիալական հոգածության կենտրոնում իրականացվում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ցերեկային խնամք, 2. Իրականանացնում է՝ 1) կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների ընդունելությունը, կազմակերպության սոցիալական աշխատանքի մասնագետից, բժշկից և հոգեբանից կազմված մասնագիտական խմբի միջոցով իրականացնում է երեխայի կենսապայմանների ուսումնասիրություն, 3. Երեխայի օրինական ներկայացուցչի հետ կնքում է պայմանագիր՝ կազմակերպությունում երեխային խնամք տրամադրելու վերաբերյալ, ընդ որում, 10 տարին լրացած երեխայի դեպքում՝ հաշվի է առնվում նաև նրա կարծիքը, 4. Աջակցում է կազմակերպությունում խնամք ստացող երեխաներին՝ հարմարվելու նոր սոցիալական	1. Երեխաների ընդունելությունը, հաշվառումը, խնամքի ծառայությունների տրամադրումը և դուրսգրումը իրականացվում է ՀՀ կառավարության 2015 թ. սեպտեմբերի 25-ի N 1112-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 7-րդ գլխով սահմանված կարգով, 2. Երեխաների խնամքը կազմակերպվում ՀՀ կառավարության 11.08.2016թ. N831-Ն որոշման համաձայն: 3. Համաձայն ՀՀ կառավարության 2004 թ N 1324-Ն որոշման 1) Երեխայի խնամքի իրականացումը ընտանեկանին	31.12.2021թ.	Սույն պայմանագրու նախատեսված ՀՀ օրենսդրությա չարգելված այ միջոցների շրջանակներու

ուտամնադաստիարակական կջական ծառայությունների, մասնագիտական կողմնորոշման, արվեստի միջոցով թերապիայի, օկուպացիոն թերապիայի (վերականգնողական վարժանքներով թերապիա) տրամադրումն է, աշխատանքային թերապիայի (14 տարեկանից բարձր երեխաների համար), առաջնային բժշկական օգնության և սպասարկման տրամադրման, ժամանցի, մշակութային, ինչպես նաև սոցիալական ներառմանն ուղղված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ միջոցառումների կազմակերպումը, այդ թվում՝ արտակենտրոն ծառայությունների միջոցով, կազմակերպության սպասարկման տարածքում հաշմանդամություն ունեցող երեխաներին և նրանց ընտանիքներին, ինչպես նաև ընտանեկան բռնության ենթարկված անձանց և նրանց ընտանիքի անդամներին աջակցությունը:

միջավայրում, ապահովում է ընտանեկանին առավել մոտ սոցիալ-կենցաղային պայմաններ, 5. կազմակերպությունում երեխայի ընդունելությունից հետո եռօրյա ժամկետում ապահովում է կազմակերպության սոցիալական աշխատանքի մասնագետի և համապատասխան լիազորություններով օժտված այլ աշխատողների (հոգեբան, բժիշկ, մանկավարժ և այլն) կողմից երեխայի անհատական սոցիալական ծրագրի կազմումը և դրան համապատասխան՝ երեխայի սոցիալ-հոգեբանական վերականգնման համար անհրաժեշտ միջոցառումների իրականացումը, 6. խնամքը տրամադրում է երեխայի գնահատված սոցիալական կարիքներին համապատասխան, 7. ապահովում է իր սպասարկման տարածքում բնակվող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների (այդ թվում՝ կազմակերպությունում խնամք ստացող երեխաների աջակցության անհատական սոցիալական ծրագրերով կազմակերպությանը վերապահված իրավասությունների շրջանակներում նախատեսված միջոցառումների իրականացումը: 8. կազմակերպությունում խնամք ստացող երեխաներին տրամադրում է սնունդ՝ օրական մեկ անգամ, բաճկոն, կոշիկ, դպրոցական պայուսակ և գրենական պիտույքներ՝ ըստ գնահատված կարիքների: 9. կազմակերպությունում խնամք ստացող նախատեսված 100 երեխայի 50%-ին տրամադրում է ուղեվարձ՝ 200 ՀՀ դրամ: 10. արտակենտրոն ծառայություն տրամադրող աշխատակիցներին տրամադրում է ուղեվարձ՝ 200 ՀՀ դրամ: 11. Ըստ անհրաժեշտության ապահովում է կազմակերպությունում խնամք ստացող՝ դպրոցահասակ երեխաների դասապատրաստումը դպրոցական ժամերից հետո,

հնարավորինս մոտ պայմաններում (հանգստի սենյակի, դասապատրաստման, անձնական իրերի համար նախատեսված պայմաններ): 2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով երեխայի պաշտպանությունը՝ ա) հոգեբանական և ֆիզիկական բռնությունից, այդ թվում՝ սեռական շահագործումից և այլասերումից, բ) դաժան վերաբերմունքից, գ) աշխատանքի շահագործումից, դ) հանցագործություններից, ե) անուշադրությունից և անարդարությունից, զ) առողջությունը վտանգող նյութերից և կյանքը վտանգող պայմաններից: 3) Հանրակրթական դպրոց, խմբակներ, մշակութային միջոցառումներում ընդգրկված երեխաների թիվը: 4) Հատուկ դեպքերում տարիանման հնարավորությունների, պետական կազմակերպությանը հարող տարածքի, արտակարգ իրավիճակներում ժամանակին օգնություն ցուցաբերելու, պաշտպանելու և այլնի մասին երեխաներին անհրաժեշտ տեղեկատվություն

		<p>11.1) Իրականացնում է կազմակերպությունում խնամք ստացող երեխաների ստեղծագործական ընդունակությունների և նախասիրությունների (նկարել, երգել, պարել, արտասանել և այլն) բացահայտմանն ուղղված աշխատանքներ՝ հաշվի առնելով նրանց տարիքային առանձնահատկությունները,</p> <p>12. Կազմակերպությունում խնամք ստացող երեխաներին տրամադրում է մասնագիտական կողմնորոշում, աջակցում է նրանց աշխատանքային հմտությունների ձևավորմանը և զարգացմանը,</p> <p>13. Կազմակերպում է կազմակերպությունում խնամք ստացող երեխաների առաջնային բժշկական օգնության և սպասարկման տրամադրումը՝ համապատասխան ամբուլատոր բժշկական հաստատությունում,</p> <p>14. Կազմակերպում է կազմակերպությունում խնամվող երեխաների ազատ ժամանցը, այդ թվում՝ մարզական և մշակութային միջոցառումներին, արշավներին, էքսկուրսիաներին երեխաների մասնակցությունը, աջակցում է հոգևոր և մշակութային արժեքներին երեխաների հաղորդակցմանը,</p> <p>15. Ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ կազմակերպությունում խնամք ստացող, ինչպես նաև իր սպասարկման տարածքում բնակվող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կամ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի (ռիսկի) ներքո գտնվող՝ նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններից դուրս մնացած (կամ այդ հաստատություններ չհաճախող) երեխաներին ուսումնական հաստատություններում տեղավորելու և նրանց հաճախելիությունն ապահովելու համար,</p> <p>16. Իրականացնում է կազմակերպությունում խնամք ստացող, ինչպես նաև իր սպասարկման տարածքում բնակվող՝ կյանքի դժվարին</p>	<p>տրամադրելուն ուղղված մի շարք միջոցառումների իրականացում:</p> <p>5. Երեխաների սոցիալ հոգեբանական անհատական ծրագրերի առկայությունը:</p> <p>6. ՀՀ օրենսդրության համապատասխան սանիտարահիգիեն իկ նորմերի պահպանումը</p> <p>7. Երեխայի առողջ ապրելակերպի (սնունդ, սպորտ, անձնական հիգիենա, ազատ ժամանց) համար անհրաժեշտ միջոցառումների իրականացում:</p> <p>8. 14-ից 18 տարեկան երեխաների մասնագիտական կողմնորոշմանն ուղղված միջոցառումներ:</p> <p>9. Սոցիալական վերականգնողական աշխատանքների արդյունքում վերականգնված երեխաների թիվը:</p>	
--	--	---	--	--

իրավիճակում հայտնված կամ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի (ռիսկի) ներքո գտնվող երեխաների վարքագծի և զարգացման շեղումների կանխարգելմանը, առողջ ապրելակերպի ձևավորմանը, ստեղծագործական ընդունակությունների զարգացմանը միտված աշխատանքներ,

17. Իրականացնում է կազմակերպությունում խնամք ստացող, ինչպես նաև իր սպասարկման տարածքում բնակվող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կամ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի (ռիսկի) ներքո գտնվող երեխաների հոգեբանական վերականգնմանն ուղղված անհրաժեշտ աշխատանքներ,

18. Կազմակերպությունում խնամք ստացող, ինչպես նաև իր սպասարկման տարածքում բնակվող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կամ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի (ռիսկի) ներքո գտնվող հաշմանդամություն ունեցող երեխաների վերականգնողական անհատական ծրագրերի համաձայն, աջակցում է նրանց վերականգնողական օգնության տրամադրման և սոցիալական ներառման գործընթացին՝ այդ նպատակով համագործակցելով բուժատեխնիկական հանձնաժողովի, վերականգնողական օգնություն տրամադրող մարմինների և կազմակերպությունների, սոցիալական աջակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի աշխատակազմում չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների՝ սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների և բաժինների հետ,

19. Կազմակերպությունում խնամք ստացող, ինչպես նաև իր սպասարկման տարածքում բնակվող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կամ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի (ռիսկի) ներքո գտնվող երեխաներին ըստ անհրաժեշտության տրամադրում է օկուպացիոն թերապիա (վերականգնողական վարժանքներով թերապիա),

20. Ըստ անհրաժեշտության, իրականացնում է կազմակերպությունում խնամք ստացող, ինչպես նաև իր սպասարկման տարածքում բնակվող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կամ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի (ռիսկի) ներքո գտնվող երեխաների խոսքի վերականգնման աշխատանքների իրականացում,

21. Կազմակերպությունում խնամք ստացող, ինչպես նաև իր սպասարկման տարածքում բնակվող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կամ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի (ռիսկի) ներքո գտնվող՝ տեսողության կամ լսողության խնդիրներ ունեցող երեխաների հետ իրականացնում է միջավայրին հարմարվելուն և ինքնուրույնությունը զարգացնող աշխատանքներ,

22. Ծնողավարման, ընտանեվարության հմտությունների ուսուցման, «ծնող-երեխա» փոխհարաբերությունների բացահայտման արդյունքում առկա հոգեբանական խնդիրների լուծման և խորհրդատվական օգնության տրամադրման միջոցով աջակցում է կազմակերպությունում խնամք ստացող, ինչպես նաև իր սպասարկման տարածքում բնակվող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կամ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի (ռիսկի) ներքո գտնվող հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողներին,

23. Իրականացնում է կազմակերպությունում խնամք

ստացող երեխաների ընտանիքների, ինչպես նաև իր սպասարկման տարածքում բնակվող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կամ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի (ռիսկի) ներքո գտնվող երեխաների ընտանիքներում կոնֆլիկտային իրավիճակների կանխարգելմանն ու հաղթահարմանն ուղղված աշխատանքներ՝ նպաստելով ընտանիքում բարենպաստ մթնոլորտի վերականգնմանը, 24. Իր իրավասությունների սահմաններում աջակցում է կազմակերպությունում խնամք ստացող, ինչպես նաև իր սպասարկման տարածքում բնակվող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կամ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի (ռիսկի) ներքո գտնվող երեխաների, ինչպես նաև ընտանեկան բռնության ենթարկված անձանց և նրանց ընտանիքի անդամների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության աշխատանքներին, 25. Իրականացնում է կանխարգելիչ աշխատանքներ՝ ուղղված կազմակերպությունում խնամք ստացող, ինչպես նաև իր սպասարկման տարածքում բնակվող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կամ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի (ռիսկի) ներքո գտնվող այլ երեխաների մոտ թափառաշրջիկության, մոլորակման, վնասակար սովորությունների ձեռքբերման կանխարգելմանը, 26. Կազմակերպությունում խնամք ստացող, ինչպես նաև իր սպասարկման տարածքում բնակվող՝ դաստիարակության դժվարություններ ունեցող, վնասակար սովորություններով, ինչպես նաև հակասոցիալական վարք դրսևորած երեխաներին տրամադրում է թիրախավորված աջակցություն՝ ուղղված ընտանիքի հետ սոցիալական կապերի ամրապնդմանը, վնասակար սովորություններից ձերբազատմանը և սոցիալական

ներառմանը, այդ նպատակով, ըստ անհրաժեշտության համագործակցելով նաև «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ իր գտնվելու վայրի աջակցող ցանցի և միջգերատեսչական սոցիալական համագործակցության կողմերի հետ,

27. Իր սպասարկման տարածքում բնակվող երեխաների ընտանիքների, այդ թվում՝ փոխարինող ընտանիքների համար կազմակերպում է ուսուցման դասընթացներ՝ ուղղված քաղաքացիական ակտիվ և արդյունավետ կենսակերպի ձևավորմանը, միջանձնային հարաբերությունների կարգավորմանը, ծնողավարման հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը,

28. Իր սպասարկման տարածքում բնակվող երեխաների ընտանիքների, այդ թվում՝ փոխարինող ընտանիքների համար ձևավորում է ինքնօգնության խմբեր, կազմակերպում և (կամ) տրամադրում է անհատական և խմբային խորհրդատվություններ՝ երեխաների խնամքը և դաստիարակությունը կազմակերպելու, նրանց սոցիալական մեկուսացումը կանխարգելելու վերաբերյալ,

29. Աջակցում է իր սպասարկման տարածքում բնակվող այն կենսաբանական ընտանիքներին սոցիալ-հոգեբանական, սոցիալ-մանկավարժական և սոցիալ-իրավական բնույթի սոցիալական ծառայություններ տրամադրելուն, որոնց երեխաները դաստիարակություն են ստանում խնամատար ընտանիքներում,

30. Կազմակերպությունում խնամք ստացող, ինչպես նաև իր սպասարկման տարածքում բնակվող երեխաների սոցիալական միջավայրի սուբյեկտներին, այդ թվում՝ ուսումնական հաստատությունների մանկավարժներին, ընտանիքների և երեխաների

հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպություններին, ըստ անհրաժեշտության տրամադրում է խորհրդատվություն՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող երեխաներին մասնագիտական սոցիալական ծառայությունների տրամադրման վերաբերյալ,

31. Իր սպասարկման տարածքում իրականացնում է ընտանիքների և երեխաների հիմնախնդիրների լուծմանը վերաբերող, երեխաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն ուղղված հանրային իրազեկման և խորհրդատվական բնույթ կրող աշխատանքներ,

32. Իր իրավասությունների շրջանակներում աջակցում է կազմակերպությունում խնամք ստացող, ինչպես նաև իր սպասարկման տարածքում բնակվող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կամ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի (ռիսկի) ներքո գտնվող երեխաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն ուղղված աշխատանքներին,

33. Վարում է կազմակերպությունում խնամվող երեխաների հաշվառման մատյան, կազմակերպությունում խնամվող յուրաքանչյուր երեխայի համար կազմում է անձնական գործ,

34. Երեխային կազմակերպությունում տրամադրվող խնամքը դադարեցնելուց հետո վեց ամսվա ընթացքում, այցելությունների կամ հանդիպումների միջոցով պահպանում է կապը երեխայի և նրա ընտանիքի հետ,





35. Իրականացնում է կազմակերպության աշխատողների (բազմամասնագիտական թիմի) կարողությունների և հմտությունների զարգացմանն ու փորձի փոխանակմանն ուղղված շարունակական աշխատանքներ,

36. Իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և կազմակերպության

կանոնադրությամբ սահմանված
այլ գործառույթներ:

*Նշված բոլոր արդյունքային ցուցանիշների կատարողականը գնահատվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016թ. հունիսի 22-ի N 69-Ա/1 հրամանի 2.10 կետին և նույն հրամանի N 3 հավելվածով հաստատված եռամսյակային հաշվետվության, ինչպես նաև նախարարության կողմից իրականացված մշտադիտարկման արդյունքների վերլուծության հիման վրա, որոնք հիմք են հանդիսանում Կազմակերպության տնօրենի աշխատանքը գնահատելու, ինչպես նաև Կազմակերպության որակական ցուցանիշների կատարողական արդյունքների հետագա բարելավման համար:

Կազմակերպության տնօրենի աշխատանքը գնահատվում է բավարար, եթե վերը նշված արդյունքային բոլոր ցուցանիշները, ըստ ներկայացված եռամսյակային հաշվետվության, կատարվել են նվազագույնը 75%-ով:

Նախարարություն՝	Կազմակերպություն՝
<p>Նախարարության գլխավոր քարտուղար՝</p>  <p>Ս. Մուրադյան</p> <p>(ստորագրություն)</p>  <p>Կ. Տ.</p>	<p>Տնօրենի ԺՊ՝</p>  <p>Լ. Աբրահամյան</p> <p>(ստորագրություն)</p>  <p>Կ. Տ.</p>

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

«ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի 1141 «Ընտանիքներին՝ կանանց և երեխաներին աջակցություն» ծրագրի 11009 «Երեխաների և ընտանիքների աջակցության տրամադրման ծառայություններ» միջոցառման շրջանակներում ցերեկային խնամքի իրականացման նպատակով «Լոռու մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ին դրամաշնորհի տրամադրման համար սահմանվող

1	Շահառուների միջին ամսական թվաքանակը	100	շահառու
2	Հաստիքային միավորների թվաքանակը	42	հաստիքային միավոր
3	Փոփոխուն ծախս՝ սնունդ		
	Կենտրոնում մատուցվելիք ծառայության մարդ/օրերի տարեկան քանակը	17754	մարդ/օր
	Մեկ շահառուի հաշվարկով մատուցված ծառայության մեկ օրվա գինը	820	ՀՀ դրամ
	Սննդամթերքի ծախս	14,558.0	հազար դրամ
4	Փոփոխուն ծախս՝ ընտանիքների հետազոտում և ախտորոշում		
	Երեխայի և նրա ընտանիքի հետազոտման և ախտորոշման նպատակով մասնագիտական խմբի /ամսական 30 ընտանիք/ այցերի տարեկան քանակը	360	այց
	Մեկ ընտանիքի հետազոտման և ախտորոշման գինը /3 անձ, յուրաքանչյուրին 200 դրամ/	600	ՀՀ դրամ
	Երեխայի և նրա ընտանիքի հետազոտման և ախտորոշման համար աշխատողների ուղեվարձ	216.0	հազար դրամ
5	Փոփոխուն ծախս՝ երեխաների ուղեվարձ		
	Ուղեվարձից օգտվող երեխաների ամսական թվաքանակը	50	շահառու
	Ուղեվարձից օգտվող երեխաների տարեկան մարդ/օրերի քանակը	12500	մարդ/օր
	Ուղեվարձից օգտվող երեխաների մեկ օրվա գինը	200	ՀՀ դրամ
	Երեխաների ուղեվարձ	2,500.0	հազար դրամ
6	Փոփոխուն ծախսեր՝ աշխատողների ուղեվարձ		
	Արտակենտրոնում մատուցվող ծառայություններ՝ մասնագիտական խմբի /2 անձ յուրաքանչյուր աշխատանքային օր/ այցերի տարեկան քանակը	500	այց
	Ուղեվարձից օգտվող աշխատողների մեկ օրվա գինը	200	ՀՀ դրամ
	Արտակենտրոնում մատուցվող ծառայությունների դիմաց աշխատողների ուղեվարձ	100.0	հազար դրամ
7	Ընդամենը՝ փոփոխուն ծախսեր	17,374.0	հազար դրամ
8	Հաստատուն ծախսեր	73,571.4	հազար դրամ
9	Տրամադրվող դրամաշնորհի առավելագույն չափը	90,945.4	հազար դրամ

այդ թվում՝

Փոփոխուն ծախսեր՝ սնունդ

Սննդի սահմանային չափաքանակները՝ ըստ ծախսերի տնտեսագիտական ծածկագրի

Ծառայության անվանումը	Տնտեսագիտական դասակարգման սինթետիկ հաշիվների անվանումը	Ծածկագիրը	Մեկ օրվա չափաքանակը մեկ շահառուի հաշվով (դրամ)	Տարեկան չափաքանակը (հազ. դրամ)
Պայմանագրային այլ ծառայությունների ձեռքբերում	Կենցաղային և հանրային սննդի ծառայություններ	423600	820	14558.0

Փոփոխուն ծախսեր՝ ընտանիքների հետազոտում և ախտորոշում

Մասնագիտական խմբի այցերի սահմանային չափաքանակները՝ ըստ ծախսերի տնտեսագիտական ծածկագրի.

Անվանումը	Տնտեսագիտական դասակարգման սինթետիկ հաշիվների անվանումը	Ծածկագիրը	Մեկ օրվա չափաքանակը մեկ այցի հաշվով (դրամ)	Տարեկան չափաքանակը (հազ. դրամ)
Աշխատողների ուղեվարձ	Ներքին գործուղումներ	422100	600	216.0

Փոփոխուն ծախսեր՝ երեխաների ուղեվարձ

Երեխաների ուղեվարձերի սահմանային չափաքանակները՝ ըստ ծախսերի փնտրագիտական ծածկագրի.

Անվանումը	Տնտեսագիտական դասակարգման սինթետիկ հաշիվների անվանումը	Ծածկագիրը	Մեկ օրվա չափաքանակը մեկ շահառուի հաշվով (դրամ)	Տարեկան չափաքանակը (հազ. դրամ)
Երեխաների ուղեվարձ	Ներքին գործուղումներ	422100	200.0	2,500.0

Փոփոխուն ծախսեր՝ աշխատողների ուղեվարձ

Աշխատողների ուղեվարձերի սահմանային չափաքանակները՝ ըստ ծախսերի փնտրագիտական ծածկագրի.

Անվանումը	Տնտեսագիտական դասակարգման սինթետիկ հաշիվների անվանումը	Ծածկագիրը	Մեկ օրվա չափաքանակը մեկ սպասարկողի հաշվով (դրամ)	Տարեկան չափաքանակը (հազ. դրամ)
Աշխատողների ուղեվարձ	Ներքին գործուղումներ	422100	200.0	100.0

Հասարակական ծախսերի գծով

Կարգավելիք հասարակական ծախսերի սահմանային չափաքանակները՝ ըստ ծախսերի փնտրագիտական փարթերի.

Տնտեսագիտական դասակարգման կատեգորիաների անվանումը	Ծածկագիրը	Տարեկան չափաքանակը (հազ.դրամ)
Աշխատանքի վարձավորություն	410000	59,757.5
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	420000	13,213.9
Այլ ծախսեր	480000	600.0
Ընդամենը		73,571.4

Ամիսները	Ընդամենը (հազ.դրամ)	Ամիսները	Ընդամենը (հազ.դրամ)
հունվար	7,578.8	հուլիս	53,118.9
փետրվար	15,157.6	օգոստոս	60,684.2
մարտ	22,857.7	սեպտեմբեր	68,249.5
ապրիլ	30,423.0	հոկտեմբեր	75,814.8
մայիս	37,988.3	նոյեմբեր	83,366.6
հունիս	45,553.6	դեկտեմբեր	90,945.4
Ընդամենը			90,945.4

Նախարարություն
Նախարարության գլխավոր քարտուղար
Ա. Մորադյան
(ստորագրություն)
Լ.Տ.



Կազմակերպություն
Տնօրենի ժող.
Լ. Աբրահամյան
(ստորագրություն)
Լ.Տ.



ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ 2021թվականի պետական բյուջեի 1141 «Ընտանիքներին՝ կանանց և երեխաներին աջակցություն» ծրագրի 11009 «Երեխաների և ընտանիքների աջակցության տրամադրման ծառայություններ» միջոցառման շրջանակներում ցերեկային խնամքի իրականացման նպատակով «Լոռու մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմիցամսում փաստացի խնամվողների թվաքանակի շարժի վերաբերյալ

1 փաստացի շահառուների թվաքանակի շարժ.

ՀՀ	Հաշվետու ժամանակաշրջանը	Հաշվետու ժամանակաշրջանի օրերի թիվը	Գրանցված շահառուների թիվը հաշվետու ժամանակաշրջանի սկզբում	Ընդունվել են	Դուրս են գրվել	այդ թվում		Նոր ընդունված և ժամանակավոր/բացակայություն կից վերադարձված խնամվողների (շահառուների)	Ժամանակավոր բացակայող խնամվողների (շահառուների) բացակա մարդ/օրերի թիվը	Խնամվողների (շահառուների) փաստացի մարդ/օրերի թիվը	Հաշվետու ժամանակաշրջանում խնամվողների (շահառուների) միջին թիվը
						Տեղափոխվել են շուրջօրյա հաստատություններ	Նոր ընդունված և ժամանակավոր/բացակայություն կից վերադարձված խնամվողների (շահառուների)				
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	
1									0	#DIV/0!	
Ընդամենը		0	0	0	0	0	0	0	0	#DIV/0!	

3 հետազոտման համար հաշվառված ընտանիքների և այդ ընտանիքների դիսկի գոտում հայտնված երեխաների շարժ

ՀՀ	Հաշվետու ժամանակաշրջանը	Հաշվետու ժամանակաշրջանի օրերի թիվը	Հաշվետու ժամանակաշրջանի սկզբում հետազոտման համար հաշվառված ընտանիքների և դրանց դիսկի գոտում հայտնված երեխաների թիվը		Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում հետազոտման համար հաշվառված ընտանիքների և դրանց դիսկի գոտում հայտնված երեխաների թիվը		Հաշվետու ժամանակաշրջանում փաստացի հետազոտվող ընտանիքների և դրանց դիսկի գոտում հայտնված երեխաների թիվը		Հաշվետու ժամանակաշրջանում փաստացի հետազոտված ընտանիքների և դրանց դիսկի գոտում հայտնված երեխաների թիվը		Հաշվետու ժամանակաշրջանում հետազոտության արդյունքում կազմակերպության շտեմարան ընդգրկված, դիսկի գոտում հայտնված
			ընտանիք	երեխա	ընտանիք	երեխա	ընտանիք	երեխա	ընտանիք	երեխա	երեխա
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1											
Ընդամենը		0	x	x	0	0	0	0	0	0	0

ՊՈԱԿ-ի տնօրեն _____ (ստորագրություն) _____ (անուն ազգանուն)
 Գլխավոր հաշվապահ _____ (ստորագրություն) _____ (անուն ազգանուն)

Կ.Տ.

Նախարարություն՝

հասցե՝

հ/հ
հլ/հհ

հասցե՝

հ/հ
հլ/հհ

ԱԿՏ
Հանձնման-ընդունման

«__» «__» 2021թ.
Պայմանագրի անվանումը՝
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝
Պայմանագրի համարը՝

Նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար _____, և Կազմակերպությունն՝ ի դեմս Կազմակերպության տնօրեն _____, հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրով նախատեսված Միջոցառումների իրականացման վերաբերյալ, պատասխանատու ստորաբաժանման «__» «__» 2021թ. N _____ եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված Միջոցառումների իրականացումը համապատասխանում է պայմանագրով նախատեսված Միջոցառումներին և տրամադրման ժամանակացույցին՝ կազմեցին սույն ակտը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կազմակերպությունը «__» «__» 2021թ-ից «__» «__» 2021թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ Միջոցառումները.

Համառոտ նկարագիրը	Քանակը	Նվազագույն շահավետ գինը՝ մեկ միավորի հաշվարկով	Մեկ միավորի գինը	Մեկ միավորի համար տրամադրվող դրամաշնորհի չափը	Վճարման ենթակա գումարը	Վճարման վերջնաժամկետը ամիս, ամսաթիվը
		(դրամ)	(դրամ)	(դրամ)	(հազ. դրամ)	
1	2	3	4	5=3-4	6=2x.5	7
Երեխաների ցերեկային խնամք	x	x	x	x	x	x
Փոփոխուն ծախս, այդ թվում	x					
Ռիսկի գոտում հայտնված երեխաներին մատուցած ծառայություններ՝ սնունդ	Մարդ/օր					
Ռիսկի գոտում հայտնված երեխայի և նրա ընտանիքի հիմնախնդիրների հետազոտում և ավտորոշում	այց					
Ուղեվարձից օգտվող երեխաների հասանելիք գումարը	Մարդ/օր					
Ուղեվարձից օգտվող աշխատողների հասանելիք գումարը	այց					
Հաստատուն ծախս						
Ընդամենը	x	x	x	x		x

ընդունեց՝

հանձնեց՝

/ստորագրություն/

ազգանուն

Կ.Տ

/ստորագրություն/

ազգանուն

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N __ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

« __ » « __ » 2021թ.

Պայմանագրի անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « __ » « __ » 2021թ.

Պայմանագրի համարը՝

Պատվիրատուի անվանումը՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Կատարողի անվանումը՝

Վերոհիշյալ պայմանագրի շրջանակներում Կատարողը « __ » « __ » 2021թ.-ից « __ » « __ » 2021թ.-ը

ընկած ժամանակահատվածում իրականացվել է հետևյալ ծառայությունները.

ՀՀ	Մատուցված ծառայությունների					
	Աշխատանքային օրերի թիվը	Տեխնիկական բնութագրերի համառոտ շարադրանքը	Քանակական բնութագիրը		Կատարման ժամկետը	
			Ըստ պայմանագրով հաստատված ժամանակացույցի	Փաստացի	Ըստ պայմանագրով հաստատված ժամանակացույցի	Փաստացի
1		Ռիսկի գոտում հայտնված երեխաներին՝ կենտրոնում մատուցած ծառայություններ՝ սնունդ /մարդ/օր/				
2		Ռիսկի գոտում հայտնված երեխայի և նրա ընտանիքի հիմնախնդիրների հետազոտում և ախտորոշում /այց/				
3		Ուղեվարձից օգտվող երեխաների մարդ/օրեր -ի թիվը /այց/				
4		Ուղեվարձից օգտվող աշխատողների այցերի թիվը /այց/				

Նշումներ անհամապատասխանությունների մասին՝

Հիմք ընդունելով վերոգրյալը, տալիս եմ _____ եզրակացություն
/Դրական/բացասական/

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝

_____ վարչության պետ

